



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«02» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 043 - 26

Նախաձեռնող՝

«ՎԻՎԱՍՈՒԱՐ» ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր 0012, Վ.Վաղարշյան փ. 20

Գործունեությունը՝

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում
Գեղարքունիքի մարզի, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ԲՓ № 043 - 26

«02» ապրիլի 2026թ.

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 2 հողամաս հասցեում «Ծովինար 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատաքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՎԻՎԱՍՈՒԱՐ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր

Ներածական մաս. «ՎԻՎԱՍՈՒԱՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Գեղարքունիքի մարզի, Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 2 հողամաս հասցեում կառուցել արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ № 05112025-05-0059 /ծածկագիրը՝ 05-052-0318-0124/, Մարտունի համայնքի կողմից 16.12.2025թ.-ին տրված № ՆԹ-11541 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 2 հողամաս հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքի ընդհանուր մակերեսը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման № 05112025-05-0059 վկայականի, կազմում է 11,79786 հա: Համաձայն «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է կառուցել 7000 կՎտ հզորության արևային էլեկտրակայան, որը միացվելու է «Փարվանա» ՊՕԿ-ի արևային էլեկտրակայանի միջոցով: Կառուցվելու է նաև 110 կՎ լարման օդային գծի մոտակա խարսխային հենարանին, կառուցելով համապատասխան նրկարության 110 կՎ



լարման էլեկտրահաղորդման գիծ: Կառուցվելու է համապատասխան հզորության 110/0.8/0.8 Կվ լարման տրանսֆորմատորային ենթակայան: Նախատեսվող գործունեության տարածքում ըստ ֆոնդային տվյալների մինչև 5 մ խորությամբ գրունտային ջրեր չեն հայտնաբերվել և գտնվում են ավելի խորը հորիզոններում:

Ֆիզիկատեղաբանական վտանգավոր երևույթներն, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհներ չեն կառուցվելու, և գործունեության ենթակա տարածք հնարավոր կլինի մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով: Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նախագիծը իրականացվել է լիցենզավորված կազմակերպության կողմից համաձայն՝ Կառավարության 2023թ. ապրիլի 21-ի «էլեկտրատեղակայանքներ սարքվածքի կանոններ» № 583-Ն որոշման պահանջներին համապատասխան: Գործունեության իրականացման համար կազմակերպվելու է շինհրապարակ, որտեղ տեղակայվելու է՝ հանդերձարան, խոհանոց, պահակատուն, նյութերի պահեստավորման տարածք, բիոզուգարան 2 հատ, աղբի հավաքման կետ 2 հատ, հողի հավաքման վայր մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ 8,0x3.5 մ չափերի: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ: Շինարարական աշխատանքների ընթացքում աշխատողների համար նախատեսված ճաշարանը, գրասենյակը, տեղադրվելու են ժամանակավոր վագոն տնակներում: Շինհրապարակում մեքենաների անիվների լվացումից առաջացած հոսքաջրերն ուղղորդվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարաններ, իսկ անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասե վերգետնյա խողովակներով բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու է տարածքում տեղադրվող պարզարան: Պարզեցված ջուրը օգտագործվելու է շինարարական աշխատանքների ժամանակ հրապարակի ջրցանման և մեքենաների անիվների լվացման: Շինհրապարակը ցանկապատվելու է, և ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, անվտանգության և հակահրդեհային միջոցներով: Շինարարության փուլում օգտագործվելու են հետևյալ տեխնիկա-տրանսպորտային միջոցները՝ 1 հորատող, 1 ավտոմոբիլային մոնիպուլյատոր, 1 ինքնաթափ, 1 ավտոաշտարակ, էքսկավատոր, կցորդային բեռնատար և այլն: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հետևյալ հողային աշխատանքները՝ կայանի կառուցման ժամանակ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման և լուսավորության հենասյուների տեղադրման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ: Նախատեսվող գործունեության տարածքում առկա է 0-0.1 մ³ հզորության հողաբուսական շերտ: Տարածքից հանվելու է 2065.6 մ³ հողային գրունտ, որից բուսահողը՝ 206.5 մ³: Հանվող 1859.1 մ³ հողային զանգվածից՝ 1269.4 մ³ օգտագործվելու է որպես հետլիցք, մնացած 589.7 մ³-ը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր: Հանվող բուսահողը պահվելու է տեղում, որը օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման համար: Արևակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, ցանկապատման, լուսավորության կառուցման, ժամանակավոր վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի



Նախատեսված է նաև տարածքի տեսահսկում: Տեսահսկման համակարգն ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան էկրանին: Տարածքի տեսահսկման համակարգը բաղկացած է հասցեավոր տեսախցիկներից, ինֆորմացիոն ստորգետնյա մալուխներից, ցանցային կոմուտատորներից: Ինֆորմացիոն և տեսահսկման բոլոր մալուխներն անցկացվելու են խողովակներով: Արևակայանի կառուցման ընթացքում հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: Արևակայանի շինարարության և շահագործման փուլերում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է շտերով՝ ըստ պահանջի: Աշխատողներն օգտվելու են շարժական բիոզուգարանից, որի սպասարկմամբ զբաղվելու է համապատասխան կազմակերպությունը: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան շինարարական և կենցաղային աղբ, ինչպես նաև վտանգավոր թափոններ՝ օգտագործվող նյութերի մնացորդներ, յուղոտված լաթեր, տրանսֆորմատորային յուղեր, յուղերով աղտոտված ավազ: Նշված վտանգավոր թափոնները տեղափոխվելու են լիցենզավորված ընկերությունների կողմից:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու արևային կայանի և ենթակայանի կառուցման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, օդային գծի անցկացման տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ, իսկ շահագործման փուլում՝ կայանի անվտանգ շահագործման հետ: Միջոցառումները ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում: Հնարավոր արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերի համար: Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է տարածքի բարեկարգում:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով՝ նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևույթային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:



Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը տեղափոխվելու է աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր բացասական ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովվում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինարարական հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում՝ թույլատրելի նորմերին համապատասխան,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռքբերում լիցենզավորված մատակարարներից՝ ներառյալ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը իրականացվ բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենասարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ՝ ներառյալ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվում է մասնահանել տարեկան 400 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի վարչական ղեկավարի նախաձեռնությամբ անցկացված



հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Մարտունու համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Հնարավոր վթարների դեպքում վտանգավոր թափոնները՝ յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասեր, հեռացնել գործունեության տարածքից և բացառել կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտումը և տարածումը:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում, շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմին:
5. Արևային էլեկտրակայանի կառուցման ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Արևային էլեկտրակայանի կառուցումն իրականացնել՝ Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» N 523-Ն որոշման համաձայն:

ԵՃՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԻՎԱՍՈՒԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 2 հողամաս հասցեում «Ծովինար» և արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական



Եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Զեդինազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան